

ԵՎՐԱՍԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ  
ՊԱՏՄԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼԵՐԸ\*

Նանա Առուստամյան

Եվրասիականությունը ծագել է 1920-ական թթ. սկզբներին ռուսական գաղթական մտավորականության շրջանում՝ որպես ազդակ 1917թ. հեղափոխությանը: Այն փորձում էր ինաստավորել հեղափոխությունը և դրանից քաղել պատմական, աշխարհագաղաքան դասեր:

Ընդհանուր առմամբ Եվրասիականների հայացքները հանգում էին հետույալին. Ուսասատանը ո՞չ Եվրոպա է, ո՞չ է Ասիա. այն ինքնաբավ երկիր-մայրցամաք Եվրասիան է, որն ունի իր սեփական ուղին:

Հարկ է նշել, որ Եվրասիականության առաջացման նախադրյալների խնդիրը հետազոտողների կողմից միանշանակ չի ընդունվում: Մի մասը կարևորում է պատմական իրավիճակը, մշակութային-սոցիալական, քաղաքական համատեքստը, մյուսները՝ հոգևոր-ինտելեկտուալ ժառանգականությունը, ըստ որի՝ Եվրասիականները պավոնաֆիլների հետոնորդներ են, որոշ հեղինակներ էլ չեն ընդունում ինտելեկտուալ ժառանգականությունը: Այդ բոլորն էլ մենք դասում ենք պատմական նախադրյալների շարքին:

Եվրասիականության ուսումնասիրողներից Ն. Վ. Ոյազանովսկին 1960-ական թթ.-վերջին նշում է, որ Եվրասիականության ծագման պատմական և սոցիալ-հոգեբանական գործուների կողմին հարկ է դիմարկել ինտելեկտուալ գործոնը, այսինքն՝ «մտքի գարգացումը Ուսասատանում և Եվրոպայում»:[1]

Անդրադարնալով Եվրասիականության առաջացման պատմական պայմաններին՝ նպատակահարմար ենք համարում տալ մի փոքրիկ պատմական ակնարկ Եվրասիականության էռլեյան և նրա հիմնադիրների մոտեցումների մասին:

Եվրասիականության հիմնադիրներն էին լեզվաբան Ն. Ս. Տրուբեցկոյը, աշխարհագրագետ և տնտեսագետ Պ. Ն. Սավիցկին, աստվածաբան, հետազայում քահանա Գ. Ն. Ֆլորովսկին, արվեստագետ Պ. Պ. Սուվչինսկին: 1921թ. Սոֆիայում լուս է տեսնում Եվրասիականների առաջին ժողովածուն «Ելք դեպի Արևելք. Կանխազգացումներ և իրականացումներ»[2], իսկ 1922թ.՝ Երկրորդ ժողովածուն՝ «Եվրասիականների պնդումները»[3], որտեղ ներկայացված էին Եվրասիական շարժման հիմնական սկզբունքները:[4] Եվրասիականության հայեցակարգը բուռն գարգացում ապրեց XX-րդ դ. 20-ական թթ. Պրահայի համալսարանում, որտեղ կենտրոնացած էին քազմաթիվ ռուս գիտնականներ, մանկավարժներ, որոնք լրել էին Ուսասատանը 1917թ. հեղափոխությունից հետո:

Եվրասիականության հայեցակարգը նախ և առաջ հիմնվում է Պանիելսկու գաղափարների վրա՝ հակադրելով ազգայինը և համազգայինը, անհատականը և համընդիանուրը: Եվրասիականների պատմական հայացքների հիմքում ընկած է Շաբենգլերի՝ «Եվրոպայի մայրամուտը» գրքում ծևակերպված տեսությունը, որը մի կողմից՝ Եվրոպական մշակույթի ճգնաժամի մասին է, մյուս կողմից էլ՝ պավոնաֆիլների՝ Ուլ-

\*\* Հոդվածն ընդունվել է 12.02.2015:

Հոդվածը տպագրության է Երաշխավորել ք.գ.դ., պրոֆեսոր, Ա. Ենգոյան:

## ՄԵԽՐՈԴ ՄԱՆՈՒՅԹ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

սաստանի գարգացման ինքնաբավության գաղափարների մասին: Եվրասիականները համարում էին, որ Արևուտքում գերիշխող ռոմանոգերմանական մշակույթը խորը ճգնաժամի մեջ է և նրան փոխարինելու է նոր մշակույթ, որի կրողը ռուս ժողովուրդն է:[5] Եվրասիականները Ռուսաստանի ինքնաբավությունը տեսնում էին Ասիայի հետ կապերի վաղեմության մեջ: Այդ կապերը ավելի ավանդական էին համարում, քան Արևուտքի հետ ունեցած կապերը: Եվրասիականությունը առավել հայտնի ռուսական գաղթական հոսանքներից է, որը կարողացավ ներգրավել արտագաղթած ռուսական մտավորականությանը միասնական Եվրասիական գաղափարի շուրջ: 1920-ական թթ. Եվրասիականությունը, որպես գաղափարական-քաղաքական հոսանք իր հիմնական խնդիրն էր համարում ստեղծել ինքնաբավ ռուսական քաղաքակրթություն, որը հիմնված կլինի ուղղափառության վրա: Սավիցելին իր «Եվրասիականություն» հոդվածում գրում էր, որ Եվրասիականները կամգնած են ավանդույթի հողի վրա և Ռուսաստան-Եվրասիան ընկալվում է որպես մեկ միասնություն:

Եվրասիականությունն «աշխարհագրական» ծագում ունի: Հին աշխարհում առանձնացնում էին երկու մայրցամաք՝ Եվրոպա և Ասիա: Սավիցելին նշում է, որ Եվրասիականները սկսեցին տարբերակել երրորդ մայրցամաքը՝ Եվրասիան, որտեղից էլ ստացան իրենց անվանումը: Ռուսաստանը զբաղեցնում էր Եվրասիայի տարածքի զգալի մասը: Գտնվելով տարրեր մայրցամաքների միջև՝ ռուսական մշակութային կեցությունը ներառում էր տարրեր մշակույթների տարրեր: Հարավի, Արևելքի և Արևուտքի ազդեցությունը զգալի էր ռուսական մշակույթում: Հարավի՝ բյուզանդական մշակույթի ազդեցությունը հիմնականն ու երկարատևն էր, և որպես այդ ազդեցության դարաշրջան նշվում են Հ-ԽIII-րդ դդ.: [6] Արևելքը այստեղ դիտարկվում է, որպես «տափաստանային քաղաքակրթություն», որը բնորոշ է Ասիային: Մոնղոլ-քաղաքական պետականության օրինակը, ինչպես նշում է Սավիցելին, մեծ դեր է ունեցել հզոր ռուսական պետականության ստեղծման գործում: Արևելքի ազդեցությունը հատկապես ուժեղ էր XIII-XV-րդ դդ.: Դրանից հետո Եվրոպական մշակույթի ազդեցության շրջանն էր, որը իր գագաթնակետին է հասնում XVIII-րդ դ.: Այսպիսով՝ ռուսական մշակույթը ոչ «Եվրոպական» է, ոչ էլ «ասիական». այն համարում է երկուսի տարրերը մեկ միասնության մեջ: Ռուսական մշակույթը «Եվրասիական» է:

1927 թ. Տրուբեցկոյ ծնակերպում է հետևյալ բանաձեռ՝ Խորհրդային Միությունը, նախկինում Ռուսական կայսրությունը, բազմազգ ընդհանրություն է՝ հասուն ազգայնականությամբ: Այդ ազգը անվանում է Եվրասիական, նրա տարածքը՝ Եվրասիա, նրա ազգայնականությունը՝ Եվրասիականություն:[7] Ռուսաստանը «ժողովուրդների ժողով» է, և Եվրասիականները համոզված են, որ ազգային առանձնահատկությունները մի ներդաշնակություն կվազմեն և կնպաստեն լայն համաԵվրասիական ազգայնականության առաջացմանը:

Եվրասիականները անհրաժեշտ էին համարում ռուսական պատմության ընդլայնումը մինչև Եվրասիայի պատմության շրջանակները, որպես հասուն պատմական և աշխարհագրական տարածք: Եվրասիականները մեծ ուշադրություն էին դարձնում այդ տարածքի աշխարհագրական առանձնահատկություններին: Եվրասիան յուրօրինակ աշխարհագրական միջավայր է, որտեղ աշխարհագրական հիմնական գոտիները (տունդրա, անտառ, տափաստան, անապատ) տարածվում են որպես քառաշերտ դրոշի հորիզոննական շերտեր: Այդ տարածքում հնուց ի վեր գյուլթյուն ունեին մշակութային և քաղաքական միասնականացման միտումներ և Եվրասիայի պատմությունը զգալի չափով այդ միտումների պատմությունն է: Միասնականացման միտումները դրսորդում էին դեռևս ալնձի և բրոնզի դարաշրջաններում, երբ նշանավորվում է Եվ-

## ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՎ ՀԱՍԱՍՏԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Դասիական տափաստանային և անտառային գոտու մշակույթների միջև սերտ կապը: Ավելի ուշ շրջանում՝ երկաթ դարում, Եվրասիայի պատմության հիմնական փաստը սկզբանական և հոնական պետությունների գոյությունն էր:

Եվրասիականները հաճում են նրան, որ Եվրասիայի պատմության առաջին հազարամյակի ընթացքում ռուսական (արևելավակոնական) ցեղը Եվրասիական պատմության մեջ հունի մեջ ներգրավված չէր, չնայած դրա հիմնական իրադարձությունները արտացոլվում են նրանում: Այսպես, օրինակ, Կիլյան Ռուսիան ստեղծվել է Եվրասիայի արևմտյան ծայրամասում համաեվրասիական միավորնան միտումների ժամանակավոր թուլացման շրջանում, սակայն շարունակում էր գարգանալ նոյն հիմքի վրա, ինչ հոնական և սկզբանական տերությունները:[8] Եվրասիականների կարծիքով՝ XVI-XX-րդ դդ. ռուսական պետությունը ավելի շատ սկզբանական հոնական և մոնղոլական տերությունների շարունակությունն է, քան մինչքառարական Ռուսիայի պետական ձևի: Այս կարգը, որտեղ հասարակության բոլոր խավերը համարվում են ծառայողներ և հարկատուներ, որտեղ չկա հողի մասնավոր սեփականություն և սոցիալական խմբի դերը որոշվում է պետության նկատմամբ նրա դերով, խոր արմատներ ունի քոչվոր տերությունների պատմական կարգում: Այդ կարգը ընդունվել է Մոսկովյան Ռուսիայի կողմից և մեծ քաղաքական ուժ ստացել:

Որոշ հեղինակների կարծիքով՝ Եվրասիականությունը ծագել է «զգացմունքներից»: Եղել են «դառը ապրումներ» Եվրոպայի դավաճանության համար և «դառը» բացահայտումներ. «մենք Եվրոպայի համար օտար ենք»: «Այդ ճշմարտության բացահայտումը ավելի շատ ապրվում էր, քան գիտակցվում: Քանի որ մենք ծեզ համար օտար ենք, ապա մենք դեպի ծեզ կշրջվենք ասիական դեմքով»:

Եվրասիականները անգամ բարձրական լին մեջ էին դրական կողմեր տեսնում: Տրութեցկոյը առանձնացնում է «Զինգիգխանի ավանդույթի» հիմնական սկզբունքները.

- Մարդկանց բաժանումը՝ ստոր, եսասեր, վախկոտ, ում համար արժանապատվությունը վեր է անվտանգությունից և նյութական բարեկեցությունից: Առաջիններին մոնղոլները անվանում էին «սև ուկոր», երկրորդ խմբին՝ «սպիտակ ուկոր» կամ «երկար կամքի» մարդիկ:

- Կրոնականությունը պարտադիր պայման է, որը Զինգիգխանը գնահատում է ենթականների մեջ:

- Դոգմատիզմի բացակայություն և կրոնական հանդուրժողականություն:[9]

Իսկ Եվրոպականացումը, որը սկսվել էր Պետրոս 1-ի օրոք Եվրասիականների կարծիքով, բերեց Ռուսաստանի Եվրասիական հնքնարավության «անարգման», մտավորականության ազգային ինքնագիտակցության մթագննան, երբ նրանք ընդունում էին արևմտյան արժեքները որպես բացարձակ, կատարյալ: Եվրասիականները պնդում են, որ եթե անգամ հեղափոխությունը աղետ էր Ռուսաստանի համար, դա պատմականորեն արդար «Ռուսաստան-Ասիայի» հայթանակն էր «Ռուսաստան-Եվրոպայի» նկատմամբ: Այսն, երբ Ռուսաստանը «դեմքով շրջվել է դեպի Արևելք», նրա համար բացվում է օրգանական զարգացման և հնքնարավության ուղին:

Կարող ենք նշել, որ Եվրասիական փիլիսոփայությունը արտացղում է ռուսական պատմության հիմնական հաստատումները: Եվրասիական փիլիսոփայության հիմնական սկզբունքը «գարգացող բարդությունն է»: Ռուսական պատմության մեջ երեք մոնղոլնիկ պետություն չի եղել: Դեռևս ծևավորման ամենավաղ շրջանում ռուս ժողովուրդը սկավոնական և ֆիննուգրական ցեղերի համադրության արդյունք էր:

15-րդ դարի կեսերին հին ռուսական էթնոսի տարածքում 3 նոր, երիտասարդ էթնոսներ են ծևավորվում, որոնք նման չեն իրենց նախնում: Նրանց միջև տարբերությունը սկավոնական և ֆիննուգրական ցեղերի համադրության արդյունք էր:

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

նը բնական է, միշտ էլ այդպես է եղել և կիխի սուպերէթնոսների մեկը մյուսին փոխարինման ժամանակ: Գումըյովը մի օրինակ է նշում՝ Բյուզանդիան իրեն համարում էր «Երկրորդ Հռոմ»՝ Էությամբ լինելով «հակա-Հռոմ»: Կարլոս Մեծը 800թ. ֆրանկյան թագավորությունը անվանում էր «Սրբազն հռոմեական կայսրություն» և խառնաշփոթից խուսափելու համար ավելացնում էր «գերմանական ազգի» բառակազմակցությունը: Գալիան, Բուրգունդիան, Ավստրամիան, Պրովանսը վերածվեցին ֆրանկյական թագավորության և նրանց բնակչները դարձան ֆրանսիացիներ: Նման փոփոխությունների համար անհրաժեշտ էր պասիոնար խթան, որի շնորհիվ հարևան էրնոսները ծովում են՝ կազմելով նորը: Նոր էքսուր ժառանգում է իր կազմում միավորված էրնիկ խմբերի մշակույթը: Այդպես եղավ նաև Ռուսաստանում: Վելիկոռուսները, բելոռուսները, ուկրաինացիները հին ռուսների հետ հարթերվում էին նոյն կերպ, ինչպես խուլացիները՝ հռոմեացիների, միայն այն տարբերությամբ, որ վերջինների մոտ կարողի կությունն էր մշակութային դոմինանտ, իսկ ռուսները պահպանել են հին ուղղափառությունը:[10] Այնուհետև Ռուսիայի բարդ էրնոմշակութային «ժողովածովի» մեջ ներթափանցեցին չինգիզխանյան, թաթարական տարրեր: Ռուսները այնպիսի էրնիկ և ռասսայական հանրույթ են, որ չունեն պետականության մենաշնորհ և որպես միասնական ամբողջ գոյություն ունեն պետականաշխնության գործընթացում շատ ժողովուրդների, այդ թվում թուրքական գործոնի մասնակցությամբ:[11] Հենց այս մոտեցումն էլ ընկած է Եվրասիական փիլիսոփայության հիմքում:

Եվրասիականները պնդում էին, որ Ռուսաստանը ունի իր սեփական ուղին, որը չի համընկում արևմտյան քաղաքակրթության հիմնական ուղղության հետ: Վերջին հազարամյակի համաշխարհային պատմությունը ցուցադրում է Եվրասիական աշխարհի և արևմտյան քաղաքակրթության հակառակությունը. կամ ռուսները, կամ նրանք: Եվրասիականները առաջինն էին, որ նման անգիծում դիրք գրավեցին, ինչն էլ դարձավ Եվրասիականության նոյնականացման կարևոր գիծ: Արևմտյան աշխարհի հետ ծովում ռուսական քաղաքակրթության և պետության համար չի կարող բեղմնավոր լինել: Եվրասիականները պնդում էին, որ քաղաքական կարգի ոչ մի փոփոխություն, գաղափարախոսության ոչ մի կատարելագործում չի կարող ազատել Արևմտյան հետ կոչտ հակառակությունից:

Եվրասիականությունը կարևոր ռազմավարական, փիլիսոփայական և սոցիալ-քաղաքական գործիք և անհրաժեշտ տարր է ռուսական ներքին և արտաքին քաղաքականության համար:

Եվրասիականները ռուսական պետության ապագան տեսնում էին միայն իրավահական ժողովուրդների ազատ միության (ֆեղերացիայի) մեջ: Միևնույն ժամանակ նրանք վախենում էին, որ առանձին ժողովուրդների քաղաքական և մշակութային իրավունքների ընդայնումը կարող է հանգեցնել անշատողական ծգությունների և կործանել երկիրը: Դա կանխարգելելու համար Եվրասիականները առաջարկում են նպատակառությամբ ստեղծել համաեվրասիական մշակույթ և ձևավորել համաեվրասիական ինքնազիտակցություն, որը ներդաշնակորեն կհամադրվի առանձին էրնիկ մշակույթների զարգացման հետ և չի հակառակի լոկալ նոյնականացումներին: Ըստ Եվրասիական հայեցակարգի համաեվրասիական մշակույթի հիմքը պիտի լինի ռուսականը:

Եվրասիական շարժմանը մասնակցում էին արտերկրում բնակվող ռուսական մտավորականության ականավոր ներկայացուցիչները՝ ի դեմս փիլիսոփիա Լ. Պ. Կարսավինի, պատմաբան Գ. Վ. Վերնադսկու, իրավագետ Ն. Ն. Ալեքսեև, բժիշկ Է. Խարա-Ղավանի և այլոց: Շարժման զարթոնքը կապված էր «Եվրասիական պարբերականի» հրատարակման հետ, իսկ հետո՝ «Եվրասիականություն». համակարգային շարադրման

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

փորձ» 1926թ. ծրագրային փաստաթղթի հրատարակման հետ, որի հիմնական մասը շարադրել է Պ. Ն. Սավիցլին, ով համարվում է ռուսական աշխարհաքաղաքականության հիմնադիրը: Եվրասիականությունը կարելի է բաժանել երեք փուլի՝ առաջինը նրա հիմնապորման և գիտական փաստարկման փուլն (1921-1925թթ. կենտրոնը՝ Պրահան էր): Երկրորդ փուլը նրա արդյունավետ գործառնան, տեսության խորացման և քաղաքականացման շրջանն էր (1926-1929թթ. Փարիզ և Բեռլին) և վերջապես տեսական ու կազմակերպական թուլացման փուլ սկսած 1930թ.-ից:[12] Երկրորդ փուլում շարունակվում էին լուս տեսնել «Եվրասիական քրոնիկները» և հրատարակվում էր «Եվրասիա» թերթը: Թերթի հրատարակումը շարժման «ծախ» թվի կազմակերպական ամրագրումն էր: Եվրասիականության փարիզյան կենտրոնը, որի հիմնական տեսարանը Կարսավինն էր, կենտրոնացած էր գաղափարաքաղաքական շարժման և խորհրդային իշխանության հետ համագործակցության վրա: Տրուբեցկովը և Սավիցլին դա յնքանչացում անվանեցին: 1930-ական թթ. Եվրասիականությունը, որպես շարժում դադարեց գոյություն ունենալուց: Եվրասիականության գաղափարները նորից բարձրացվեցին և գիտական մշակումների ենթարկվեցին 1960-ական թթ. պատմաբան և էթնոլոգ Լ. Ն. Գումիխովի կողմից: Այնուհետև Ա. Գ. Ղուգհնը վերամասնության վերածնունդը կապված էր ԽՍ տոցիալ-տնտեսական, քաղաքական ճգնաժամի և դրա փլուզման հետ:

Լ. Ն. Գումիխովը իր աշխատանքներում համադրում էր Վերնադսկու պատմական կոնցեպցիաները և Սավիցլու գաղափարները: Հենց Եվրասիականության ազդեցությամբ էլ նա առաջ է քաշում էթնոգենեզի և պասիոնառության տեսությունները: Իր «Էթնոգենեզ և Երկրի կենսոլորտը» աշխատությունում նա շարունակում է Սավիցլու գաղափարները էթնիկ առանձնահատկությունների վրա աշխարհագրական լամորշաֆտների ազդեցության վերաբերյալ, նշելով, որ մի կողմից էթնոսը պատմական գործընթացի արդյունք է, մյուս կողմից էլ կապված է այն լամորշաֆտի բիոցենոզի հետ, որտեղ ծևավորվել է: Նա նաև զարգացրեց Տրուբեցկովի մշակութապատմական տիպի Եվրասիական հայեցակարգը, այն դնելով էթնիկ աստիճանակարգության մեջ և անվանելով սուպերէթնոս: Սուպերէթնոս են անվանում էթնոսների խմբերին, որոնք միաժամանակ ի հայտ են եկել որոշակի շրջանում և փոխկապակցված են տնտեսական, գաղափարական և քաղաքական հարաբերություններով: Սուպերէթնոսը սահմանվում է, ոչ թե չափերով, հզորությամբ, այլ բացառապես միջթնիկ մերձությամբ:[13] Նրա հիմնական ուսումնասիրման առարկան դարձավ Մեծ տափաստանը՝ Կարպատյան լեռներից մինչև Չինական պատ, այդ տարածքում ժողովուրդների և պետությունների կյանքը դարերի և հազարամյակների ընթացքում: Նա համարձակութեն առաջ քաշեց բնության պայմաններով սահմանված «մարդկային գործոնի», որպես էթնոսի ծևավորման գործում շարժիչ ուժի գաղափարը: Գումիխովը դա սահմանում է «պասիոնառություն»-առանձին անհատականությունների, առաջնորդ-հերոսների էներգիան (հեռավորարևելյան տափաստանում կոչվում էին «Երկար կամքի մարդիկ»):

Ա. Ղուգհնը կարևորում էր Եվրասիականության ծագման աշխարհաքաղաքական հիմքերը: Եվրասիա մայրցամաքի մասին գործ էր հետպայլը. Ղուլս ԽՀ-ող դ. սկզբին Սավիցլինը, կիրառելով ռեալ քաղաքականության նկատմամբ աշխարհաքաղաքական մոտեցում, պնդում էր, որ Ցամաքի քաղաքակրթության հիմքը Եվրասիական մայրցամաքն է, իսկ դրա միջուկը Եվրասիայի հյուսիս-արևելյան հողերն են, որը Մակինդեր անվանում է «աշխարհի սիրտ» (հարթենդ): Ուստանանք Ցամաքի քաղաքակրթության աշխարհաքաղաքական պլատֆորմն է, նրա պատմական մարմնավորումը: Նրա հակառակորդները Մեծ Բրիտանիան, ԱՄՆ են, որպես ժուղային քաղաքակրթություն

## ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

յան պատմական արտօնահայտություն:[14] Ծովի քաղաքակրթության անգլոսաքսոնական գոտու և Յամաքի քաղաքակրթության ռուսական գոտու միջև անընդհատ պայքար է ընթանում ափային գոտու նկատմամբ հակողություն սահմանելու համար: Սակայներդ գրում էր, ով Վերահսկում է Եվրասիան, նա Վերահսկում է ամբողջ աշխարհը: ԽՍՀՄ և ԱՍԽ քաղաքականությունը Եվրոպայում, Ասիայում և հեռավոր Արևելքում XX-րդ դ.երկրորդ կեսին «աշխարհի սիրո» աշխարհաքաղաքական գաղափարի արտացոլում է:

Ն.Ալեքսեևը նշում է, որ Եվրասիականները, հաստատելով պատմական և աշխարհագրական գործոնների միջև կապը, համարվում են ռուսական պատմության աշխարհաքական մոտեցման հիմնադիմները:

Այսպիսով՝ կարող ենք նշել, որ որոշ հետազոտողներ Եվրասիականությունը դիտարկում են որպես աշխարհաքաղաքական տերմին: Այն ընկալվում է ոչ թե որպես ռուսական մոտքի փիլիսոփայական ուղղություն, այլ որպես Յամաքի քաղաքակրթության և «աշխարհի սրտի» ռազմավարական շահերի ամբողջություն XX -րդ դարի ընթացքում:

Տրուբեցկոյը իր «Եվրոպան և մարդկությունը» աշխատությունում գրում է, որ ազգային հարցի վերաբերյալ յուրաքանչյուր Եվրոպացի կարող է գրավել տարրեր դիրքեր, բայց դրանք հանգում են երկու ծայրահետ մոտեցման, մի կողմից՝ շովինիզմ, մյուս կողմից՝ կոսմոպոլիտիզմ: Յուրաքանչյուր ազգայնականություն շովինիզմի և կոսմոպոլիտիզմի տարրերի սինթեզն է, այդ երկու հակառակությունների հաշտեցման վերը: Սակայն ավելի խորը ռուսմանասիրելով դրանք՝ կարելի նկատել, որ սկզբունքային տարրերություն այդ երկուսի միջև չկա, դրանք միևնույն երևույթի երկու տարրեր կողմերն են:[15] Շովինիզմը և կոսմոպոլիտիզմը հիմնված են ենակենտրոն հոգերանության վրա: Ոչ ռոմանոգերմանական ժողովուրդների մոտավորականության գիտակցությունում հեղաշրջումը ճակատագրական է համընդհանուր Եվրոպականացման գործում: Եթե նրանք հասկանան, որ Եվրոպականացումը չարիք է, իսկ կոսմոպոլիտիզմը՝ խարկանք, կրադարեն օգնելու ռոմանոգերմանացիներին, և «քաղաքակրթության» հաղթական մուտքը կկանգնի: Այդ բարդ գործում՝ ազատել աշխարհի ժողովուրդներին «քաղաքակրթության բարիքներ» հիանողից և ոչ ռոմանոգերմանական ժողովուրդների մոտավորականությանը հոգնոր ստրկությունից, պետք է գործել միամնաբար: Հեղանակը նշում է, որ չպետք է շեղվել խնդրի էռությունից: Պետք է հիշել, որ սկավոնների հակառակությունը գերմանացիներին, կամ թուրանցիներին՝ արհացիներին խնդրի լուծում չեն, որ իրական հակառակությունը մեկն է՝ ռոմանոգերմանացիներ և աշխարհի այլ ժողովուրդներ, Եվրոպա և մարդկություն:

Պ.Սավիցկին նշում էր, որ մի կողմից՝ Եվրոպականացման գործընթացում տեղի է ունեցել Ռուսաստանի ինքնահաստատումը գրականության և արվեստի ոլորտում, մյուս կողմից՝ համաշխարհային պատերազմի և հեղափոխության արդյունքում Ռուսաստանի հայտն եկավ նոր պատմական երևույթ՝ բոլշևիզմը: Բոլշևիկյան գործողություններում զգալի էր արևմտյան ազդեցությունը: Բայց ժողովրդական բոլշևիզմը, որպես պրակտիկա, էական տարրելիք նրանից, ինչ կամիսանտածել էին նրա առաջնորդմանը՝ «արևմտյան» մարդկությունը: Բոլշևիկյան սոցիալական էքսպերիմենտը իր գաղափարական և տարածական մասշտաբներով Արևմուտքի պատմությունում նախատիպ չուներ և այդ իմաստով յուրօրինակ ռուսական էր:[16] Տրուբեցկոյի «Եվրոպա և մարդկություն» հակառակությունը, հեղինակը փոխարինում է «Եվրոպա և Ռուսաստան» հակառակությամբ: Այս բանաձեռ, սակայն որոշ «թերություններ» ունի, քանի որ Ռուսաստանն իր զգալի չափով Եվրոպայի մաս է:

## ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Եվրասիականությունն իր առաջին քննադատների կողմից դիտարկվում էր, որպես սլավոնաֆիլության շարունակություն: Օրինակ՝ խորհրդային պատմաբան և հրապարակախոս Ն. Մեշերյակովը նշում էր, որ այն հերքում է արևմտյան քաղաքակրթությունը, ազգայնական է և նոյնացնում է սլավոնաֆիլության հետ: *Տրուբեցկոյը* գրում էր, որ, ազատելով ռուսական մտածողությունը և աշխարհներակալումը արևմտյան կապանքներից, պետք է ռուսական ազգային ոգով տարերքում գտնել տարրեր նոր աշխարհայացքի համար:

Որոշ հեղինակներ տարբերակում են Եվրասիականության հետևյալ փուլերը՝ Դասական Եվրասիականություն, Գումիշյովը որպես «Վերջին Եվրասիական» և ներեւուասիականություն:[17] Դասական Եվրասիականությունը (1920-1930թթ.) սլավոնաֆիլների զաղափարական հետնորդն էր: Չնայած Սավիցկին նշում է, որ Եվրասիականությունը սլավոնաֆիլների հետ ընդհանուր հիմքի վրա է գտնվում, երկու հոսանքների փոխարաբերությունների խնդիրը չի կարող հանգել պարզ ժառանգման: Եվրասիականության ինքնատիպությունը, ըստ Սավիցկու, նրանում է, որ այն երեք ուսմունքների օրիգինալ սինթեզ է՝ 1. ուշ սլավոնաֆիլների բյուզանդականություն, այսինքն՝ ռուսական մշակույթի հիմնական տարրը բյուզանդական ժառանգությունն է և ուղղափառ եկեղեցին, որը զուգորդվում է Եվրոպական քաղաքակրթության չընդունմամբ: 2. Արևելականություն, երբ ընդունվում է մոնղոլ-թաթարական լժի դրական դերը, ռուսական և թուրքական ժողովուրդների պատմական ճակատագրի և մշակույթի միասնությունը: 3. Օրիգինալ քաղաքական-տնտեսական ուսմունք, որը մոտ է մարքսիզմին իր քաղաքական եզրահանգումներով:

Այդ երեք ուսմունքների սինթեզը հիմնվում է Ռուսաստանի պատմության և մշակույթի ռացիոնալ վերլուծության և աշխարհաքաղաքական տեսությունների վրա, այսինքն՝ ժողովուրդների քաղաքական և ազգային կեցության ձևերը հարաբերվում են աշխարհագրական տարածության հետ: Ըստ Սավիցկու՝ Ռուսաստան-Եվրասիան հիմնարդի կենտրոն է, հեռացրեք այդ կենտրոնը և նրա բոլոր տարրերը (Եվրոպա, Առաջավոր Ասիա, Իրան, Հնդկաստան, Հնդկաչին, Չինաստան, Ճապոնիա) կվերածվեն «տարրապուծքած» կարույցի: Սավիցկու «Տափաստան և նստալյացություն» հոդվածում ամրագրվում է տափաստանի դրական դերը Ռուսաստանի կազմավորման գործում: Հենց մոնղոլ-թաթարներն իրենց ներխուժմամբ Ռուսաստանին տվեցին ռազմական կազմակերպվածության հատկություն՝ ստեղծելու պետական-հարկադրական կենտրոն, նրանք տվեցին հզոր Հորդա դաշնայու հատկություն:[18]

Եվրասիականներն իրենց առջև խնդիր էին դրել ինաստավորելու 1917թ. հեղափոխությունը և մարքսիստական զաղափարախոսությունը իր դրական ու բացասական կողմերով: Սոցիոլոգիական առումով Եվրասիականները հեղափոխությունը հասկանում են որպես հասարակության առաջատար (կառավարող) շերտի փոխարինում: Ցուրաքանչյուր պետական կարգում կարելի է տարբերակել այս կամ այն հատկանիշով միավորված մարդկանց խմբի իշխանությունը: Եվրասիականների մոտ այդ հատկանիշը կապված է որոշակի զաղափարի հետ: Այդ ձևը անվանում են զաղափարախիշանություն: Եվրասիականների դրվագնում կարևորվում է պետության, որպես հարկադրման ապարատի դերը, հատկապես Եվրասիայի պայմաններում: Եվրասիականները Ռուսաստանի համար լավագույն պետական կարգը համարում էին «ֆիդոկրատիան» (զաղափարախիշանություն):[19] Ըստ Տրուբեցկոյի՝ զաղափարախիշանական տիպին բնորոշ է կառավարող շերտի միավորվածությունը ընդհանուր աշխարհայացքով: Գաղափարը ժողովուրդների բարիքն է, որոնք բնակվում են այդ հատուկ աշխարհում:

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՒՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

Եվրասիականության ժաղկման շրջանը 1925-1927թ.: Այդ ժամանակ Պետական քաղաքական կառավարման կազմակերպությունը (ՕԳՊԿ) իրակացնում էր «Տրեսու» գործողությունը (գործողություն սպիտակ գաղթի և նրա ռազմաքաղաքական կազմակերպությունների նկատմամբ վերահսկողություն հաստատելու համար՝ կեղծ հակաբոշշեկիլյան Կենտրոնական Ռուսաստանի միապետական կազմակերպության ստեղծման միջոցով): Եվրասիականները կապեր են հաստատում Պետական քաղաքական կառավարման գործակալների հետ, հավատում երանց և փորձում այդ կեղծ հակաբոշշեկիլյան կազմակերպությունը ուղղել դեպի Եվրասիականություն: 1928թ. «Տրեսու» դիմակագերծվեց, Ռուսաստանում մահացան մի քանի Եվրասիականներ: Զնայած «Տրեսու» տարբեր կազմակերպություններ կային, Եվրասիականներին մեղադրեցին կոմունիստների հետ հարաբերությունների մեջ: Այնուհետև հիմնադրվեց «Եվրասիա» թերթը, որի ուղղվածությունը, ըստ Տրուբեցկոյի, Սավիցկու, Ալեքսեևի, ոչ մի ընդհանություն չուներ Եվրասիականության հետ:

«Եվրասիա» թերթի կողմնակիցներն էին Սուվչինսկին, Կարսավինը, Մրապովը: Նախապատրաստական աշխատանքներ էին տարբում Եվրասիականների 2-րդ համագումարի կազմակերպման համար, որտեղ պիտի հարթվեին տարակարծությունները: Սակայն 1931թ. համագումարը չհարթեց հակադրությունները և Եվրասիականությունը դարձավ գաղթական փոքր հոսանք, որը կորցրեց երբեմնի կարևորությունը: 1932թ. լուս է տեսնում Վերջին Եվրասիական ժողովածուն: 1932թ.-ից հետո մինչև 1938թ. շարունակվում էին տպագրական աշխատանքները, բայց այն այլևս կապված չէր գաղափարական միասնության հետ: 1928թ.-ից հետո սկսվում է Եվրասիականության մայրամուտը, թուլանում է նրա գործունեությունը, ներսում գաղափարական տարակարծություններ են առաջանում: Կարծում ենք, որ դրա պատճառներից են՝

1. Եվրասիականությունն իրեն վերապահել է պատմության դատավորի դերը՝ քննադատելով տարբեր քաղաքական հոսանքների: Եվրասիականները քննադատում էին արևմտյան լիբերալիզմը, պավոնաֆիներին, բոլշևիկներին:

2. Նրանց հեղինակությանը մեծ հարված հասցրեց կապը «Տրեսու» հետ: Եվրասիականներին մեղադրեցին անհետաղականության մեջ:

3. 30-ական թթ. սկզբներին գաղափարական տարակարծությունների ի հայտ գալը և խորացումը: Արդյունքում Եվրասիականների մի մասը անցնում է ծախ Եվրասիականների կողմը (Սուվչինսկի, Կարսավին, ովքեր համագործակցում էին խորհրդային իշխանությունների հետ), իսկ պահպանողական կենտրոնը մնում է նախկին դիրքություն:

Եվրասիականությունը անկում ապրեց որպես հասարակական-քաղաքական հոսանք, բայց նրա գաղափարները բեղմնավոր էին:

Եվրասիականությունը միայն պատմական և տեսական ուսմունքների համակարգ չէ, այն փորձում է համադրել միտքը գործողության հետ: Այս արումով Եվրասիականների հիմնական խնդիրը կյանքի և աշխարհի նկատմամբ կրոնական վերաբերությունը և էմպիրիկ հիմնավորված կիրառելիության համադրությունն է: Եվրասիականները միաժամանակ կրոնական սկիզբը հիմնավորուներ և հետևողական էմպիրիկմեր են:

Եվրասիականության ժագման հնտելեկտուալ գործոնի վրա առաջինը ուշադրություն էին դարձել ռուս գաղթականներ, Եվրասիականների ժամանակակիցներ՝ Ն.Ա. Բերդյակը, Պ.Բ. Ստրուվն, Պ.Ն. Միշուկովը, Վ.Վ. Զեմկովսկին և այլք: Մի կողմից նշվում է Եվրասիականների գաղափարների նոր լինելը և դրանց կապը 1910-1920թթ. պատմական հանգամանքների հետ, մյուս կողմից էլ նշվում է որոշ նախահեղափոխական մտավորականների հայացքների ժառանգման մասին: Բերդյակը «Ուղի» ամսագ-

## ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

յում Եվրասիականությունը սահմանում է, որպես միակ հեղափոխական գաղափարական ուղղություն, որը ծագել է գաղափարական միջավայրում: Եվրասիականներին համարում է հին դոկտորինալ գաղափարախոսությունից ազատ սերունդ: Ըստ նրա Եվրասիականների գաղափարները օրիգինալ չեն, քանի որ դրանք հին պավոնաֆիլների, Ն. Դանիելսկու մտքերի վերարտադրությունն են:

Միյուկովը պնդում էր, որ Եվրասիականությունը կրոնակիլիսոփայական հոսանքի «Երիտասարդ սերունդ» է, որը սկսվում է «Վեխեր»-ից: [20] Եվրասիականների հայացքում նա տեսնում էր Դանիելսկու մշակութային տիպերի մասին «հնացած ուսմունքի առծագանքները»: Միյուկովի համար Եվրասիայի գաղափարը՝ որպես երրորդ աշխարհամաս, այս մետաֆիզիկական «ռեալիզմի» արտահայտությունն է, որով տարված են կրոնական փիլիսոփաները:[21] Միյուկովը Եվրասիականներին դասում է նախահեղափոխական կրոնա-փիլիսոփայական միտումներին՝ միաժամանակ բարձրացնելով Եվրասիականության և պավոնաֆիլության կապերի հարցը: Նա պնդում է, որ մշակութային հարցերում Եվրասիականները ստրկամտորեն հետևում են իրենց նախորդներին՝ պավոնաֆիլներին: Ուստական գաղթական մեկ այլ պատմաբան Ա.Ա. Կիցենեստրը հերքում է Եվրասիականների և պավոնաֆիլների միջև կապը՝ պնդելով, որ դրանց միջև «խոր անդունդ» կա:

Անդրադարձակով Եվրասիականության մասին ժամանակակիցների հայացքներին՝ հարկ է նշել Զենկովսկու մասին, նա Եվրասիականությունը չի առանձնացնում ռուսական մտքի համատեքստից և նշում է, որ Եվրասիականության մեջ արտացոլված են գաղափարներ, որոնք կապված են տարբեր շարժումների և ռուսական գիտակցության գաղափարական շարժերի հետ: Նա Եվրասիականությունը դնում է ինտելեկտուալ համատեքստի մեջ:

Ուստական գաղթական մտավորականների կարծիքը, Եվրասիականության մասին հետաքրքիր լինելով հանդերձ, միակողմանի է և հանգում է Դանիելսկու հիշատակմանը:

Եվրասիականները ծգուում են գտնելու ընդհանուրի և անհատի շահերի սինթեզ և գտնում են, որ հեղափոխությունը դա է նախապատրաստում: Անհատի գաղափարը Եվրասիականների աշխարհայացքում կենտրոնական տեղ է գրադեցնում:

Ուստական աշխարհը նրանց համոզմամբ հատուկ աշխարհագրական, լեզվական, պատմական, տնտեսական աշխարհ է: Ուստաստան-Եվրասիան նրանք ընկալում են որպես «սիմֆոնիկ անհատականություն»[22]: Ի տարրերություն Արևմտյան ավանդույթի, որը անհատին ընդունում է որպես ինդիվիդ, Կարսավինը նշում է, որ անհատի էլությունը արտահայտվում է նրա գործունեության բազմաթիվ ծննդում և այլ անհատների հետ հարաբերություններում: Անհատը դիտարկվում է, որպես սիմֆոնիա: Իր կատարելությանը «սիմֆոնիկ անհատը» կարող է հասնել միայն Եկեղեցում: Եվրասիականների համար Եկեղեցին ազատության ոլորտն է, իսկ պետությունը՝ ուժի և հարկադրման:

Եվրասիականների մտադրությունը Ուստաստան-Եվրասիա աշխարհի ինքնահաստատումը շրջապատող աշխարհի հետ ստեղծագործական մերձեցման գործոն դարձնելն է: Ուստի նրանք ցանկանում էին մերձենալ այլ մշակույթների հետ ստեղծագործական փոխգործակցության միջոցով:

Միայն ամրապնդվելով որպես հոգևոր և նյութական ինքնարակ աշխարհ՝ Ուստաստանը կարող է լավագույն ձևով կառուցել իր հարաբերությունները Եվրոպայի հետ: Եվրոպայի հետ մերձենալու համար պետք է հոգեպես և նյութապես անկախանալ:

## ՄԵՄՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍՏԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

նրանից: Եվրասիականները պնդում են, որ Ուսաստանը ունի բոլոր նախադրյալները, որպեսզի ապահովի Եվրոպայից անկախ մշակութային զարգացում:

Եվրասիական պետությունը հանդես է գալիս որպես «ազգությունների և հավատքի ամրոջություն»: Նման գծեր առկա էին ներևս սկզբութական և հոնական տերություններում, որոնք գոյություն են ունեցել Ուսաստան-Եվրասիայի տարածքում: Ազգային և կրոնական համբուրժողականությամբ առանձնանում էր XIV-XVIII-րդ դդ. մոնղոլական տերությունը:

Կրոնական ազատության տարրեր կային Մուսկովյան պետությունում: Օրինակ՝ Ի-վան Անեղոր իրեն համարում էր ոչ միայն ուղափառների, այլև մահմեդականների հովանավորը:

Որպես կյանքի և աշխարհայացքի համակարգ՝ Եվրասիականությունը կրոնական հիմք ունի, նշանակած է Եվրասիականների հրչակագրում: Եվրասիականության էությունից բխում է, որ Եվրասիական պետությունը երաշխավորում է ազատ մշակութային զարգացման հնարավորությունը, ինքնակառավարումը և ազգերի համագործակցությունը:

Եվրասիական պետությունը իր առջև երկու խնդիր է դնում՝

1. Ուսաստան-Եվրասիա հասունականությունից աշխարհի կազմակերպման խնդիր,
2. աշխատավորների հոգևոր և տնտեսական ազատության խնդիր:[23]

Եվրասիականությունը ռուսական հեղափոխական, քաղաքական, զաղափարախոսական և հոգևոր շարժում է, որը սահմանում է Ուսաստան-Եվրասիա աշխարհի մշակութային առանձնահատկությունը:

Եվրասիականությունը պիտի դիմի ռուսական հեղափոխությանը Ուսաստանի իշխական մշակութային նեմքը բացահայտելու համար: Եվրասիականների կարծիքով հոկտեմբերյան հեղափոխությունը, իր ներքին իմաստով, որը բացահայտված չէր, Եվրասիական էր: Քաղաքական բնույթով հեղափոխությունը ազատագրության գործընթաց էր, սակայն այն սկզբ դրեց բռնապետական քաղաքական կարգի: Արժեքային ծգուումներով այն անհատական էր, բայց ռուսական հեղափոխությունը հավաքական էր: Եվրասիականները վստահ են, որ իրենց զաղափառների վրա հիմնված համակարգը կարող է վերացնել հեղափոխական գործընթացի հակասությունները:

Դեռևս Եվրասիականների ժամանակակիցները, որոնք փորձում էին բացատրել որա ծագումը՝ կապված պատմական հանգամանքների հետ (հեղափոխություն, քաղաքացիական պատերազմ) դիտարկում էին նաև Եվրասիականության հարաբերակցությունը նախորդ հոսանքների հետ: Եվրասիականությունը տարրեր փիլիսոփայական ուղղությունների, հոսանքների՝ սկավոնաֆիլության, արևմտականության և այլնի սիմթեզ է: Այն առաջանում է պատմական ճգնաժամային պայմաններում, դեռևս 1860-70-ական թթ., երբ դիտարկվում էին հասարակության զարգացման քաղաքական, տնտեսական, մշակութային ուղիները, ի հայտ են գալիս Ն. Դամիելակու, Կ. Լեոնտևի աշխատանքները, որոնց վրա հիմնվում են դասական Եվրասիականության հիմնական զաղափառները: Այսուհետև հոկտեմբերյան հեղափոխությունը, որն իր ուղղությամբ հակարևումտյան էր և կանխորոշում էր պետականամետ ու պահանդական ուղղվածությունը, որով Ուսաստան-Եվրասիան կընթանա օրգանական զարգացման և ինքնարավության ուղղվածությամբ: Եվրասիականության առաջացումը պայմանավորված էր ինդուստրիալ համահարթեցման դպրացրջանում ազգային և մշակութապատմական ինքնարավության պահպանման անդրաժեշտությամբ: Եվրասիականության ծագման գործում մեծ ներ է ունեցել նաև մոնղոլական տերությունը: Զինգիշխամին և նրա հետնորդներին հաջողվել է Եվրասիական քաղաքակրթական տարածությունում ստեղծել հզոր տերություն, որի հիմնական սկզբունքները (ուժեղ պետական իշխանություն, կրոնա-

## ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2015

կան և էթնիկ համուրժողականություն) արդիական են բազմազգ պետության կառավարման համար:

Այսպիսով՝ կարող ենք նշել, որ միասնական մոտեցումը Եվրասիականության ժագման պատմական նախադրյալների հարցում բացակայում է, և պատահական չէ, որ ներկայում էլ Եվրասիականության շուրջ բննարկումները շարունակվում են:

Եվրասիականության գաղափարական դրույթներից ամենակարևորը Եվրասիայում բնակվող ժողովուրդների գենետիկ և մշակութահոգեքրանական բնորդության ձևանաչումն է: Եվրասիականները նշում են, որ Եվրասիայի բնությունը ենթադրում է քաղաքական, մշակութային, տնտեսական միավորնան անհրաժեշտություն: Այսպիսով՝ Եվրասիականությունը հեղափոխական, քաղաքական, գաղափարախոսական շարժում, պատմահիլիսովայական հոսանք է, որը ստեղծվել է XX-րդ դարի 20-ական թթ. ուս մտածողների կողմից և նրա հիմնական գաղափարը Ուսասատան-Եվրասիայի՝ հատուկ պատմական-աշխարհագրական աշխարհ լինելու փաստի ամրագրումն է: Եվրասիականության էությունը հասկանալու համար անհրաժեշտ է դիտարկել նրա առաջացման պատմական, տղիալ-մշակութային գործոնները, ինտելեկտուալ ժառանգականությունը միասնական մեջ:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Селиверстов С.В. Истоки евразийства в представлениях российской эмиграции 1920-х годов <http://ecsocman.hse.ru/data/2013/06/21/1251226284/5.pdf>
2. Ելք դեպի Արևելք. Կանխազգացումներ և իրականացումներ» ժողովածուն Եվրասիականների առաջին հավաքական մանֆեստն էր, որտեղ ներառված էին չորս հեղինակների տաս հոդվածներ (Պ.Ն. Սավիցկի- 3 հոդված, Պ.Պ. Սուլցինսկի-2 հոդված, Գ.Ն. Ֆլորովսկի-3 հոդված, Ն.Ս. Տրուբեցկոյ-2 հոդված)
3. На путях. Утверждение евразийцев. Книга вторая: статьи Петра Савицкого, А. В. Карташева, П. П. Сувчинского, Кн. Н. С. Трубецкого, Георгия В. Флоровского, П. Бицилли// <http://nevmenandr.net/eurasia/index.php>
4. Чернышов Л. И История евразийского движения [http://www.gumer.info/bibliotek\\_Buks/Polit/nart/04.php](http://www.gumer.info/bibliotek_Buks/Polit/nart/04.php)
5. Тлеугабылова К. С. Л.Н. Гумилев – один из основоположников идеи евразийства / К. С. Тлеугабылова, А. А. Абдрахманова, Т. Ж. Макалаков // Молодой ученый. 2013. №2. стр. 288-291. <http://www.moluch.ru/archive/49/6156/>
6. Савицкий Петр. Евразийство. Прага. 1925 [http://yeurasia.org/library/classical\\_eurasianism/петр-савицкий-евразийство](http://yeurasia.org/library/classical_eurasianism/петр-савицкий-евразийство)
7. Русская идея Сборник произведений русских мыслителей/Сост. Е. А. Васильев. М., Айрис-Пресс, 2002, стр. 379-380:
8. Савицкий П.Н.Евразийская концепция русской истории 1938 - 1939 <http://gumilevica.kulichki.net/SPN/spn11.htm>
9. Гумилев Л. Н.Ритмы Евразии Эпохи и цивилизации. М., АСТ, 2008, стр. 55:
10. Гумилев Л. Н. Древняя русь и великая степь. М.:АСТ, 2008, стр. 713-714.
11. Дутин А. Г. Евразийство: от философии к политике. Доклад на Учредительном съезде ОПОД "Евразия" (21 апреля 2001 г., Москва) <http://evrazia.org/modules.php?name=News&file=article&sid=734>
12. Марлен Ларюэль Идеология русского евразийства или мысли о величии империи. М., Наталис, 2004, стр. 32

## **ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԻՐԱԾՈՒ 2015**

13. Гумилев Л. Н.Этногенез и биосфера земли. М., АСТ, 2001, стр. 60
14. Дутин А. Г. Проект Евразия. М.:Экмо, Язуа, 2004, стр 271-272
15. Трубецкой Николай Европа и Человечество.  
София.1920http://eurasia.org/troubetzkoy\_europe\_humanity/
16. Савицкий П.: Европа и Евразия «Русская мысль». Нарли (Турция).1921  
http://eurasia.org/library/classical\_eurasianism/петр-савицкий-европа-и-евразия
17. Самохин А.В. Исторический путь евразийства как идеино-политического течения. 2004 http://www.situation.ru/app/j\_art\_316.htm
18. Савицкий П.Н. Степи и оседлость/На путях: Утверждение евразийства. 1922http://nevmenandr.net/eurasia/1922-naputiax-PNS-step.php
19. Идеократия / <http://ponjatija.ru/node/169>
20. «Կեխեր» 1909-1910թթ. ռուսական մտավորականության ժողովածուն էր: Այդունք միավորված էին Բերդյակը, Բուլգակովը, Գերշենզոնը, Իզգոնկը, Կիսյոյակովսկին, Ստրուվըն և Ֆրանկը: «Կեխեր»-ի հոդվածները պիտի տարբեր կողմերից ուսումնափրեին ռուսական ինտելեգենտցիայի հոգեբանությունը և գաղափարախոսությունը
21. Селиверстов С.В. Истоки евразийства в представлениях российской эмиграции 1920-х годов <http://ecsocman.hse.ru/data/2013/06/21/1251226284/5.pdf>
22. Савицкий П.Евразийство как исторический замысел. Прага. 1927http://eurasia.org/2013/03/31/eurasianism\_as\_a\_historic\_design
23. Декларация евразийства: Декларация и введение Евразийство Берлин. 1932 [http://eurasia.org/2013/11/02/eurasian\\_declaration\\_introduction](http://eurasia.org/2013/11/02/eurasian_declaration_introduction)

### **ԱՄՓՈՓԱԳԻՐ**

**ԵՎՐԱՍԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԻԱՐԻ ԱՌԱՋԱԳԵՄԱՆ ԱՎԱՏՈՆԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ  
ՆԱԽԱ ԱԽՈՒՍՏԱՄՅԱՆ**

Հոդվածում անդրադարձ է կատարվում Եվրասիականության գաղափարի առաջացման պատմական նախադրյալներին: Եվրասիականությունը դիտարկվում է որպես հեղափոխական, գաղափարական, քաղաքական հոսանք, որն ի հայտ է Եկել 1921թ. ռուսական գաղթական մտավորականության շրջանում՝ որպես ազդակ 1917թ. հեղափոխությանը: Հարկ է նշել, որ հետազոտողների մոտ միասնական մոտեցում չկա Եվրասիականության առաջացման նախադրյալների շուրջ և առանձնացվում են դրա առաջացման պատմական, սոցիալ-մշակութային, քաղաքական գործոնները, ինտելեկտուալ ժառանգականությունը:

**Բանալի բառեր՝ Եվրասիականություն, պատմական նախադրյալներ, ինտելեկտուալ ժառանգականություն, պակոնաֆիլներ, հեղափոխություն, ինքնաբավություն, գաղթական մտավորականություն:**

**РЕЗЮМЕ**

**Исторические предпосылки образования теории Евразийства**  
**Нана Арутамян**

В статье рассматриваются исторические предпосылки возникновения евразийства. Евразийство – революционное, идеино-политическое движение, философско-историческое течение, которое возникло среди русской эмигрантской интеллигенции в 1921г. как реакция на события 1917 года. Надо отметить, что у исследователей нет однозначного ответа на вопрос о происхождении евразийства. Выделяют интеллектуальное преемство, исторические, культурные, политические факторы, которые способствовали возникновению евразийства.

**Ключевые слова:** евразийство, исторические предпосылки, интеллектуальное преемство, славянофилы, революция, самобытность, эмигрантская интеллигенция

**SUMMARY**

**The Historical Preconditions of the Emergence of Eurasianism**  
**Nana Arustamyan**

The article deals with historical preconditions of the formation of Eurasianism. Eurasianism is revolutionary, political, ideological movement, which emerged in 1921 among the Russian emigrant intellectuals as a response to revolution of 1917. The article reveals the fact that the historical background of Eurasianism is multiple, therefore scientists pointed out historical, political, cultural factors and intellectual succession as sources of Eurasianism rising.

**Keywords:** Eurasianism, historical preconditions, intellectual succession, slavophiles, revolution, originality, emigrant intellectuals.